

## ԸԹԵՔԵԼ ԳԱՎՐԻԺԵՅԻ

1603 թվականին Շահարասն սկսեց իր Հայոնի արշավանքը օսմանցոց դեմ և Հայուստանը կրկին պատերազմական զործողությունների թատերաբնմ պարձագ։

Այս դարաշրջանի պատմությունը տալիս է Առաքել վարդապետ Դավրիժեցին։ Դավրիժեցու պատմությունը կրում է չետեւյալ վերնագիրը. «Պատմութիւն Առաքել Վարդապետի Դաւրիժեցւոյ»։

Այս համեստ վերնագիրը ինքնին խոսում է ժողովրդին նվիրված համեստ վարդապետի մասին։ Գրքի ննթավերնագիրն է. «Սակա զիսլուածոց Հայաստաննայց և դաւառին Այրարատայ և մասին Գողթան դաւառին սկսեալ ի ԱԾԱ. թուականին Հայոց մինչեւ ի ԱԾԱ. թ.։։ Ուրեմն նա զրե, է շուրջ 60 տարվա պատմություն սկսած 1602 թ. մինչեւ 1662 թվականը։ Նրա ամբողջ պատմությունը տմվուիում է 56 զրւուին, որոնցից ամենավերջինը՝ 56-րդը նվիրված է իր պատմությունը դրելու Հանդամանքներին։

«Պատմառ առնելով զդիրս պատմութեանց յորում և միշտակարան առնողին» վերնագրին առկ պատմագիրն անում է իր գիրքը դրելու պատմությունը։

Այս վերջարան կարմող դիմում նա անկեղծորեն հայտարարում է ի լուր աշմենքի, թե այս զործը, որին ձեռնարկել է, իր ուժերից վեր է եղել, ուսկայն իրեն հարկադրել են դրել. «Այս ի հարկեցուցիչ հրամանէ» ասում է նա, «Տեսան Փիլիպպոսի Ամենայն Հայոց կաթողիկոսի, որին այն մարդիկը ամենուքուներն (այսինքն Ա.

Էջմիածնի միաբանությունը և այլն։ Ա. Վ.) մեծաւ տարիիանօք և յաւէտագունիւ ըղձիւ բաղձային արձանացուցանել ի գիւյնիշատակի ի գիտութիւն յապայ եկելոց, որք յանցնիւր զարս և ժամանակո յառաջագային, նաև հանապազ մաղթական բանիւ խնդրէին ի Փիլիպպոս կաթողիկոսեղի հրամայնուցէ ուժեք կատարել զայս դործառնութիւն պատմագրութեանս»։

Այսպիսով մենք տեսնում ենք, «ր Առաքել Դավրիժեցուն շրջապատող միջավայրը կաթողիկոսից բռնած մինչեւ վերը, սարկավագը կամ տիրացուն, շահապրկութած են եղել զրի առնված տեսնել մոտիկ անցյալի ղեղքերի պատմությունը և զուցե, և անհավանական չէ, «ր այդ պահնջը գալիս էր նաև Հայ ժողովրդի զանազան խավերից ևս։ Ուրիշ խոսքով, ոյն եղել, է Հասարակական հասունացած պահնջների արդյունք, մանավանդ որ զորց և տեսեալ էին զամենայն իրականութիւնու և զանցուածս՝ որք ճառեցան ի դիրքը պատմութեանս այսմիկ, այսինքն զաւերիին աշխարհին Հայոց և զգերին և զվատնիին քրիստոնէից, այլև զնուազիլն և դրակասիլն Ակնդեցական կարգաց, և զանշքանալն և զաւէրն բարձրագահն և Քրիստոնարնակ Աթոռոյն սրբոյ Էջմիածնի, այլև զոոցին նորոգութիւն և այլ ևս բանք պատմութեանց՝ որք և դրեցան յարադրութեանս»։ Այսուղից պարզվում է, որ Առաքել Դավրիժեցին իր պատմության նյութն ամբողջովին քաղել է ականատեսների պատմություններից ու Շիշո-

զություններից, այլ խոսքով նրա զրական աշխարհութեար եղել են կենդանի մարդիկ և որոնց գտնելու, տեսնելու և պատմել տալու համար ինքը պատմագիրը մեծ դժվարութիւններ, զրկանքներ ու զոհոզություններ է հանձն առել պատվիրված դործը դժուփ բերելու նպատակով:

Այս դործի մեջ խիստ արժեքավոր է Փիլիպպոս կաթողիկոսի դերը:

Անշուշտ կաթողիկոսը և իրեն շրջապատղ միաբանությունը զգում և հասկանում էին, որ ժամանակակից դեպքերի շարադրությունը վարդապետ գրչի ձեռքով, դեպքեր, որոնց ապավորությունները դեռևս թարմ էին, սերունդների հիշողության մեջ և ականատեսների ուղղված երում, կարսղ էր ուժեղ հետաքրքրություն ստեղծել դեպի ազգային պատմությունն ընդհանրապես և դեպի դիրք ու գրականությունը մասնավորապես։ Այդպիսով անկանկած հնարավոր կլիներ կուլտուրական կյանքի սկիզբը դնել, կյանք, որի թելերը, ինչպես տեսանք, կտրվել և անհետացել էին 12, 13 և 14 և 15-րդ դարերի հսկայական տեղաշարժերի մեջ։ Այն միաժամանակ նոր հետաքրքրություն և աշխույժ պիտի ստեղծվեր հայ եկեղեցու և մանավանդ Մայր Սթոռի շուրջը, որը վերջին ժամանակարում քաղաքական փոթորիկների շնորհված գրեթե ժոռացվել էր կամ մոռացվելու վրա էր։

Այս հակասություններից ելնելով է, որ ինչպես Փիլիպպոս կաթողիկոսը, նույնպես և նրան հաջորդող Հակոբ Զուղայեցին հանգիստ չէին տալիս Դավթի ժեկուն հարկադրելով և հրամայելով նրան դրել և ավարտել այդ անհնարդելի պատմությունը։

Ահա թե ինչպես է պատմում այդ մասին ինքը Դավթի ժեկուն։ «Եւս և ինքն կաթողիկոսն Փիլիպպոս զառաւելագոյն փոյթունքը քան զամենեսեան սակա սմբին իրաց,

վասն որոյ հարկէ էր երբեմն զայս և երբեմն զայն զի կատարեսցին զայս գործու, և յուղից ոմանց իւրոցն աշակերտաց եղեւ հարկադիր զի թերեւս ոք յանձն առեալ կատարեսցէ»<sup>1</sup>։

Տարօրինակ ղուղաղիակությամբ մեր պատմագրության մեջ շարունակվում է մերեկոց պատմեր տալու և հարկադրելու այսպահական սովորությունը պահպանվել մինչև 17-րդ դարը։ Այդ պիտի բացատրել նախ նյութական պայմաններով մագաղաթի թանգությունը և ձեռք բերելու դժվարությունները և այլն, և Երկրորդ կյանքի ասպահովության խնդրով, քանի որ պատմադիրը ժամանակակիցների կյանքը քննադատում էր, հատկապես նա ազդեցիկների կողմից պիտի հոգանակորմեր, որպեսզի իրեն ապահով գտար, դրա հետ պիտի կապել և գրաքննչական հանգամանքը։

Մակայն Փիլիպպոս կաթողիկոսի ձեռնուսուն աշակերտները խուսափում են իւրենց ուսուցչի և մուսանողի պատվերը կատարել, քանի որ այն կապահած էր դըմադիրը ժամանակակիցների կյանքը դամանակորմեր, որպեսզի իրեն ապահով գտար, դրա հետ պիտի կապել և գրաքննչական հանգամանքը։

«Իսկ նոքա հմուտ դոլով զիտէին զրագմաղան աշխատութիւն, որ ի սմա և ոչ ետուն զանձինս ի տաժանումնս յայս, այլ յինքեանց ի բաց քեցեալ ճողոպրեցան»<sup>2</sup>։

Ինչպես երեսում է այս վկայությունից, Փիլիպպոս կաթողիկոսը բավական տառապել է այս պատմությունը դրել տալու հողաներով և վերջ ի վերջո հարկադրված է եղել հրամայել և ստիպել, տեսնելով որ հորդորներն ու գիտակցական մուեցումը արդյունք չեն տալիս։

Այս պարզապես երեսում է Դավթի ժեկուն հետեւյալ սողերից։ «Իսկ նուաստո և արուակ յամենեսին Աւարեալ կոչմամբս սպասաւոր բանի, դորով իմ տեղեաւ ի քաղաքէն Թաւրիպաւ, և յաշակերտութեւէ

<sup>1</sup> Դավթի ժեկուն, էջ 668.

<sup>2</sup> Նույնը, էջ 668.

ոյն տեսնու Փիլիպոսի կաթողիկոսի, և ի միաբանութենէ լուսակառուց աթոռոյն որբոյ հջմիածնի, որ և աստէն իսկ անեալ և վարժեալ, և յաւուրու ծերութեան ժամանեալ նաև ակն ունիմ զի ընդ հովանեաւ առին ամփոփել ի հոգ, զի թերեւս որ ին ոմա խորհրդակառարութեանցն լինիմ հազորդեալ: Վասն որոյ յետ ամենեցունց երբեւ անարդի միոջ եղեւ անեղ հրաման հայրապետին ի վերայ ինձ տկարիս, և որպէս զուկար կենդանի ոմն բմրոնեալ ի վարժից և յորովացթից և ոչ կարիցէ զերծանիլ... և զնդկելիս ըմբռնեալ ի վարժ զործոյ արտիկ, և ոյս յաղաղու այսքանեաց պատճառացը<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, «իրեւ անարդի միոջ եղէ ահեղ հրաման հայրապետին թվերայ ինձ տկարիս» միջոցառումներից հետո է, որ Առաքել Դավրիժեցին համաձայնում է զրել իր պատճությունը:

Դավրիժեցու այս բացատրությունների վրա մի փոքր չափով կանգ առնելը կարեւոր է բնութագրելու համար Փիլիպոս կաթողիկոսի դիմքը և այն կուլտուրական միջավայրը, որ նա ստեղծել է Մայր Աթոռում և լայն համառ աշխատանքը, որով նու ճշտում էր մեր մասնենագրական գրաւ կանությունը կյանքի կոչել:

Պարզվում է նույնպես, որ Առաքել Դավրիժեցին բավական ժամանակ դիմադրել է կաթողիկոսին և հանձն չի տեղ իրեն առաջարկված աշխատանքը կատարելու, նույնիսկ նա կողմնակի միջնորդություններ է հարուցել այդ աշխատանքից ազատվելու համար:

«Առաջին որպէս ի վերդ ցուցաւ, զի ոչ կարացի զերծանել ի հրամանէ հայրապետին, թեպէսև բազում միջնորդօք յայտարարեալ խոստովանեցայ զիմն տկարութիւն ոչ զու բաւական այսմ իրազործութեանսց<sup>2</sup>:

Սակայն ժամանակակից անցքերի պատճությունը զրի առնելը ժամանակակիցների կողմից համարվում էր խիստ անհետաձգելի անհրաժեշտություն: Փառք մեր Մայր Աթոռի ղեկավարներին իրենց այդ աշակերծությանը մենք այօր չենք ունենա: Ինչպես հայունի է այս ժամանակաշրջանի պատճությունը ավել է միայն Դավրիժեցին և ոչ միայն երկրորդը շունչներ նրա կողքին, այլև այդ ամբողջականի որոշ հատվածները կամ ժամանակական, ուրիշ արձանագրողներ չեն եղել:

Պատճությունը դրեւու և ավարտելու երկրորդ պատճառը Փիլիպոսոս կաթողիկոսին հաջորդող Հակոբ Շուղայեցի կաթողիկոսն է, որ նույնպիսի համասությամբ և ստիպմամբ, ինչպես իր նախորդն է եղել, հարկադրել է Դավրիժեցուն ավարտել այդ զործը:

«Երկրորդ ոչ միայն ի հարկելոյ Փիլիպոս կաթողիկոսին, այլ մանուանդ ի հարկելոյ մեծահոգ երկայնամբու հայրապետին տեսն Յակոբայ կաթողիկոսին Շուղայեցոյ, որ զինի Փիլիպոսոս կաթողիկոսին յաջորդեաց զգահն հայրապետական, զաթոռն սուրբ Էջմիածին. սա ես հարկեաց զիս յայս զործ, որ զինի վախճանի Փիլիպոսոս կաթողիկոսին ի բաց թողեալ էի, զի կարի բազմախոնջ և աշխատաւոր և արժանի թուեցաւ ինձ այս զործ, վասն որոյ ի բաց կացի և հրաժարեցայ ի սորբն առնելոյն. և մնաց խամանեալ այս զործառնութիւնու ի ժամանակու ինչ»<sup>3</sup>:

Ինչպես երևում է այս աշխատության հետ կապված դժվարությունները, թերեւ և ոչ բավարար չափով նյութական միջոցներ չունենալը, հարկադրել են Դավրիժեցուն զործը կիսատ թողնել և շարունակել:

<sup>1</sup> Դավրիժեցի, էջ 668.

<sup>2</sup> Նույնը, էջ 668.

<sup>3</sup> Նույնը, էջ 668—669.

## Սակայն.

«Ապա այսուհետեւ սրբազնն հայրապետն մեր Յակոբ կաթողիկոսն վերստին յիշումն արար արամ և էած զիս իւր առաջի և բաղմազան կերպիւ բանից, միւս անդամ զիս ևմոյժ ի սոյն յայտ գործ»<sup>1</sup>:

Այս վերջին պարտազրումից հետո է, որ «և այսուհետեւ յոզնակի վշտամքեր կը բիւք հազիւ թէ զայտքան պատմութիւնո հաւաքիցի և զրեցի»<sup>2</sup>:

Այսուհետեւ Դավրիժեցին նկարազրումն է իր ստանձնած դործի հետ կասլիած դժվարությունները: Չեռքի տակ որեւէ զրական հիշատակարան, որեւէ պատմական աղբյուր, գեթ զեպքերի ժամանակագրությունն կամ որեւէ ուղեցույց չունենալով նաև հարկադրված է եղել դիմել կենդանի մարդկանց, ականատեսների կամ մասնակիցների և ըստ նրանց տվյալների շարահյուսելի պատմություններ: Այս հանգամանքը աւագ է բերել երկարատեւ և դժվարին ուղևորություններ և դրա հետ կասլիած այլ դժվարություններ, ուստի և նաև կատարելապես իրավացի է, երբ այլ դործը ուրակում է «յոզնաշխատ և բազմաերկ և տաժանելի դործ», քանի որ «աւուրս յուղի ի սմին դեղերելով և ի յուղի երկրի ըստ և յաշխարհս չրջադայելով ի ինուիր դրուցաց պատմության, ոչ միայն ի քրիստոնեակից, այլ և յայլոց որոց հաբցանելով և ամենեցունց զասացեալսն դրելով, և վասն զստուգութիւն բանից գտանելոյ, եղեւ զի դժի պատմութիւն տասն սննդամ և այլ աւելի կրկնելով զրեցի, և դամս ինն ի սմին դեղերելով, և զինչս ծախսելով, հազիւ թէ զայտքան պատմութիւնս ի մի վայր հաւաքեցի և դրեցի, և բնաւ ոչ ոք եղեւ ինձ ձեռնոու, այլ միայն Տէր իմ Քրիստոս էր ինձ օգնական» Հուսահարությամբ և տիւրությամբ նշում է «Դավրիժեցին և դատապարտում իր ժամանակակիցների անտարբերությունը, սառնասըրտությունը դեպի այսպիսի մի մեծ և արժեքավոր գործ»:

Ինչպես պարզվում է Առաքել Դավրի-

ժեցին յուր պատմությունը զրել է 9 տարվա ընթացքում, բնական է, որ 40 մատուլ կազմող մի ստվար հատորի համար անհրաժեշտ կլիներ արդպիսի ժամանակամիջոց, քանի որ, ինչպես ասվեց, նա իր ձեռքի տակ ոչ մի զրաւիոր աղբյուր չի ունեցել և ամեն ինչ ստուգել է անձամբ ականատեսներին հարցնելով և, ինչպես ինքն է ասում, միևնույն պատմությունը շուասն անդամ և այլ աւելի կրկնելով զրեցի», որպեսզի հնարավորություն ունենար համեմատության կարգով ստուգել դեպքերի ճշմարտապատում լինելը: Ոյտեղից նկատում ենք, որ պատմագիրը շատ լավ է հասկացել պատմագրի իր զերը և աչալրջությամբ է վերաբերվել դործին:

Այսպիսի լրջությամբ մոտենալով իր դործին, Դավրիժեցին իր այլ գործը դըլուի է բերել միայնակ, առանց որևէ տեղից կամ մեկից օժանդակություն ստանալու և որովհետեւ գործը պահանջում էր շարունակ ճանապարհորդել ականատեսն և իրազեկ անձնավորությունների տեսչելու, դեպքերն ստուգելու և այլն, ուստի և մեծամեծ ծախսերի դուռ է բացվում: այլ ծախսերը հոգացել է ինքը պատմաբանը «ղինչս ծախսելով»: Այդ նշանակում է, որ իր վանական կյանքում նաև չափազանց համեստ և խնայողաբար է ապրել, հետեւպես և ունեցել է ու խնայել որոշ գինչքն որը և վաճառել է այս հանրօգուտ դործի ծախսերը հոգալու համար: «Եւ բնաւ ոչ ոք եղեւ ինձ ձեռնոու, այլ միայն Տէր իմ Քրիստոս էր ինձ օգնական» Հուսահարությամբ և տիւրությամբ նշում է «Դավրիժեցին և դատապարտում իր ժամանակակիցների անտարբերությունը, սառնասըրտությունը դեպի այսպիսի մի մեծ և արժեքավոր գործ»:

Դավրիժեցու այս հակիրճ, ինքնախոռն

<sup>1</sup> Դավրիժեցին, էջ 669:

<sup>2</sup> Նույնը, էջ 669:

<sup>3</sup> Նույնը, էջ 670:

նախադասությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ մեր 17-րդ դարի էջմիածնի կյանքը և վանական միջավայրի բնորոշումը։ Նրա թողած այս համառոտ ինքնակենսաւզությունից և իր աշխատությունից և նրա շուրջը եղած անցուղարձից միայն համարավոր է դադարիար կազմել նաև այդ ժամանակվա հասարակական կյանքի, նրա դեկավար մտքի վիճակի մասին։ Անշուշտ ո՞չ եղեւ ինձ ձեռնոտու, այլ միայն Քրիստոս բաց է անում այն փակադերը, որոնց մեջ ամփոփված է մեր այդ ժամանակվա հասարակական կյանքը։ Հասկանալի է, որ միայն հաս ու կենտ մարդիկ են եղել, որոնք հետաքրքրվել են մեր եկեղեցական կյանքով ու պատմությամբ։

Սակայն ի վառս Դավրիթեցու պետք է ասել, որ նու գիտակցն է իր գործի նշանակությունը «տեսանելով դաւերս Հայաստան աշխարհին, և զնուազին մերոյս ազգին, և զշարութիւն մահմեղականաց կոկծալի մորմոքմամբ այրիւր սիրտ իմ, վասն որոյ յօժարեցայ յարձանազրութեան սոցին»։

Կոկծալի, մորմոքմած սրտով զրելով իր պատմությունը նա ցամում է, որ այդ շի զուզադիպել իր երիտասարդական տարիներին և որ այդ գործը նա կատարել է ծեր հասակում և հիմանդ վիճակում, աչքերի լույսը կորցրած ժամանակ, ամ տարիքին, երբ ձեռքերն իսկ իրեն չեն հանդիպում։ Մոմի կամ ճրադի դողդողացող և ազոտ լույսի տակ նա զրել է իր հոյս կապ պատմությունը և ով դիտե ուրիշ ինչ զրկանքներ է կրել իր ճանապարհորդությունների և պանդիստության ընթացքում, որոնց մասին լուսմ է ժողովրդի համեստ զավակը։ Այլին զիսեցաւ պատահել ինձ այս գործ, ոչ ի ժամանակս առողի երկուսարդութեան, այլ յողորմելի ծերութեան, վասնզի ծեր էի և նաև յոյժ ցաւողար մարմնով, և ի լուսոյ աչքս պահանձաւ և ի պնդութենէ ձեռքս թուլացեալ դողայր։ սոյնպես և յայլոց յամենայի կու-

րողութեանց տկարացեալ, և մահու հրաւէրք ամեներեան հանդէս աշոցս եկեալ կացեալ։

Դավրիթեցին իր աշխատանքն սկսել է Հայոց ՌՃ թվականին։ Զորս տարում, մինչև Հայոց ՌՃ' (այսինքն մինչև 1655 թ.) զրել է պատմության միայն մի մասը և հավաքել է որոշ տվյալներ ու նյութեր։ Եվ ահա Փիլիպպոս կաթողիկոսը, որ շտապեցնում էր նրան ամարտել այդ արժեքավոր աշխատանքը, վախճանվում է։ Դավրիթեցին իրեն ազատ է զգում և թողնում է աշխատանքը կիսառ վիճակում գտնական զյոզնակի վտանգն և զմատանց երկն աշխատանաց։ Սակայն երկու տարի հետո Հակոբ Զուղայեցին ընտրվում է կաթողիկոս և պահանջում է պատմությունն ավարտել։ Դավրիթեցին սկսում է թէրի թողած զործը շարունակել և Հայոց ՌՃ' թվականին (այսինքն 1658 թ.) սկսելով ավարտում է այն չորս տարի հետո, Հայոց ՌՃ' թվականին (այսինքն 1662-ին)։

Իր պատմության սկզբի, ինչպես և մերջին մասը զրել է Ա. էջմիածնում։ Պատմությունը վերջնական խմբագրության է ենթարկել Մայր Աթոռում, իսկ նրա որոշ մասերը զրել է իր շրջակայությունների ընթացքում։ Այլ և թեպէտ ի շրջագայութիւնս աշխարհաց ի բազում տեղիս ժամանաւրաբար եղեւ զրեալ ի սմանէ, սուկայն սկիզբն սորին եղեւ ի բարձրագահ Աթոռն ի ոուրբ էջմիածնին և կատարումն ես ի նոյն տեղին։

Թէ Երբ է ծնվել Դավրիթեցին այդ ժակ հայունի չէ։ Նրա կենսագրությունը իմանում ենք իր հիշատակարանից։ Նա ծնվել է Թավրիզում, կրթությունն ստացել է Ա. էջմիածնում և աշակերտել է Փիլիպպոս կաթողիկոսին։ Եղել է էջմիածնի միարան և թաղվել է Ա. էջմիածնի միարանության զերեղմանատանը 1670 թվին։

Իր այս կցկուոր կենսագրությունը միքանի տողերի մեջ է ամփոփել պատմագի-

ըլ. «Իսկ նուաստ և արուսդ յամենեսին Առաքեալ կոչմամբ սպասաւոր բանի, զուվ իմ տեղեաւ ի քաղաքէն թաւրիզու և յաշկերտութիւնէ սոյն տեսանա Փիլիպպու սի կաթողիկոսի և ի միարանութիւնէ լուսակառոյց աթոռոյն սրբոյ էջմիածնի որ և աստէն իսկ սնեալ և վարժեալ, և յաւուրածերության ժամանեալ, նաև ակն ունիտ զի ընդ հայանեաւ սորին ամփոփել ի Հոգ, զի թերես որ ի մաս խորհրդականարութեանցն լինիմ հազորդեալ»: Նույն իր պատմության Լ-երրորդ գլխից իմանում էնք, որ նա եղել է Փիլիպպոս կաթողիկոսի պահած աշակերտը և նրա հրամանով մեկնել է «Յունաց աշխարհ»՝, որպես կաթողիկոսի նվիրակ: Եղել է Ամասիայում, Սեբաստիայում, Սպահանում, Ռուսայում և այլն: Ինչպես հիշվեց նա վախճանվել է Հայոց ՌՃՁԹ թվականին, այսինքն 1670 թվին: Նրա տապանաքարի վրա կա հետեւյալ անշուք արձանագրությունը:

«Պատմագիրն, այս է տապան Առաքել վարդապետին ՌՃՁԹ թուին»:

Նրա ցանկությունը կատարվել է, նա թաղվել է Ս. Էջմիածնի միարանության գերեզմանատանը:

Դավրիֆեցու ծննդյան տարեթիվը որո-

շել անհնար է, նա իր հիշատակարանում այդ մասին ոչինչ չի հայտնում: Բայց ուրովիշտն նա վախճանվել է 1670 թվականին, և բանի որ զրում է, թե խորին ծերության տարիներում է այդ պատմությունը զրել, ուստի մնում է բավականանալ ենթաղրություններով: Եթե ծերության նրա տարիքը հաշվելու լինենք 70—75, ուրեմն պետք է ընդունել, որ նա ծնվել է 16-րդ դարի վերջերին:

Ուշագրավ է Դավրիֆեցու պատմության 1896 թվականի Ս. Էջմիածնի հրատակության Ավետիս Երեց Դրչի հիշատակարանը: Այստեղ Ավետիս գրիչը հայտնում է, որ Դավրիֆեցին իր ծախքով արուագրել է տվել իր զիրքը և որ այդ 5-րդ արտագրությունն է, որ Առաքել վարդապետը կատարել է տալիս յուր Շեռագրիցընագրից: «Որ յոլով ջանիւ և բազում հոգարարձութեամբ ծախէ ինչս և ձեռամբ գրչաց զրել այս առաջին վասն օրինակին բաղմանալոյ և Երկրորդ վասն առ տէր յիշատակին: Արտագրությունը կատարվել է «ի ժայրաքաղաքո Երևան, ի զուռն սրբոյ եկեղեցւոյ», որ կոչի կաթուղիկէ ի մեծ թուականիս Հայոց ՌՃՁԵ»:

Ռուբեն վարդապետ

